

ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ
համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան

2017 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած
աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ փոխմարզպետ Գագիկ Գաբրիելյանի, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցների, մասնագետների և համայնքի 122 բնակիչների.

22.01.2018թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 127,5 %-ով
ա) Հողի հարկ -332,3 %-ով
բ) Գույքահարկ - 118,4 %-ով
գ)Վարձակալական հ/հ -100 %-ով
դ) սեփական եկամուտներ- 218,7 % -ով
ե) Տեղական վճարներ- 116,7%
2. 2017 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 15 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրների վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:
3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:
4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ:
Կատարվել է երեխաներին դպրոց ճանապարհելու ամանորյա հանդես, հանձնվել են նվերներ մանկապարտեզի, նախակրթարանի և դպրոցի տարական դասարանի երեխաներին:
5. տարվա ընթացքում 2 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում, տրվել է անվճար ակնոցներ բուլոր կարիքավորներին, որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին:

6. 2017 թվականի ընթացքում վթարվել են 9 անգամ տարբեր փողոցների խնելու ջրագիծը և 10 փողոցների կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:
7. Ժամանակին կատարվել է հացահատիկի և խաղողի բերքահավաքը, մթերվել է խաղողը և պտուղը:
8. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:
9. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 4.000.000 դրամի օգնություն:
10. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:
11. Ամբողջ ուսումնական տարին Հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:
12. Գյուղի եվս 1 փողոցներում անց է կացվել գիշերային լուսավորություն:
13. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:
14. 2017 թվականի դ րությամբ աշխատավարձի և սոց վճարների պարտքեր չկան:
15. Կատարվել է համայնքի ոռոգման ներքին ցանցի մաքրման աշխատանքները համայնքի ուժերով:
16. Տարվա ընթացքում կատարվել և ավարտվել է համայնքի բոլոր փողոցների գիշերային լուսավորության հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումների, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:
2. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:
3. Լուրջ հիմնախնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:
4. Մնացել է չլուծված բուժ ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:
5. Առաջնահերթ խնդիր է համայնքի փողոցների ասֆալտապատման հարցը:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր `

Գ. Ներսիսյան